ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՄԵՐ ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը մեր բոլորի սրտերը լցնում է շատ մեծ ուրախությամբ։ Անվերապահ խնդությամբ ողջունում ենք այս նշանակալից ակտը։ Ոչ մի ազնիվ հայ բացի ցնծագին գնահատականից, ուրիշ վերաբերմունք չի կարող ունենալ այս որոշման հանդեպ։

Բնությունների, կոտորածների և հայրենիքից վտարումների հետևանքով հայ ժողովրդի կեսը ցրված է երկրի երեսին, սակայն ոչ մի թշնամական ուժ չի կարողացել մեռցնել հայերի ազգային միասնության զգացումը, հանգցնել նրանց սերն ու կարոտը դեպի հայրենիքը և վերատին հայրենիքում հավաքվելու կեդրոնահակ ձգտումը ու մտածումը։ Գաղութահայության հայրենաբաղձ հայացքները Սովետական Հայաստան են ուղղված, ուր ապրում են և աշխատում իր արյունակից եղբայրները։ Թափառական հայ բազմությունները մի անպարտելի տենչանք ունեն— օր առաջ թողնել օտար երկրները, ուր նրանք մաշում են իրենց կյանքը, և գալ Հայրենիք, միանալ իրենց եղբայրներին, միասին աշխատել ու կառուցել, իմաստավորել իրենց և իրենց որդիների գոյությունը, վայելել իրենց վաստակը միահամուռ ջանքով ծաղկեցրած Հայրենիքում։

Մեր վերադարձող եղբայրների սիրակարոտ զգացմունքներին, մենք Սովետական Հայաստանի հայերս, կդիմավորենք նույն եղբայրակարոտ զգացմունքներով։ Դաժան Ճակատագրով իրարից բաժանված քույրեր և եղբայրներ, որ կռվել ենք զանազան ճակատներում մեր թշնամիների դեմ, մեր ընդհանուր նպատակի համար Հայրենիքի և ազատության, ազգային և մարդկային միևնույն իդեալների, այսօր երկու իրավատեր հարազատներ գրկաբաց դիմավորում ենք իրար ազատագրված հայերի տան մեջ։

Սրտագին բարի գալուստ մեր թանկագին հարազատներին։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ

Այն օրից, երբ տաճկական յաթաղանից հազիվ ազատված, ձեր սիրտն արյունով ու ձեր աչքերը արցունքով լցված հայրենի տան ծխացող կրակներից փախած ապաստան որոնելու օտար աստղերի տակ,— սպասում էինք ձեզ։

Կոտորվեցին ձեր հայրերն ու մայրերը, ձեր հարազատ քույրերը, տաճկական հարամներին զոհ չգնալու կամ լպիրշ սրիկաների ձեռքը չընկնելու համար Երասխի ալիքներին անձնատուր եղան. դուք նրանց սրբազան դիակները կոխոտելով անցաք, գնացիք օտար հորիզոններ։

Քառորդ դար մոռացության անդունդը գլորվեց, բայց դուք չմոռացաք ձեր երկիրը, ձեր մարմնական վերքերը բուժվեցին. բայց ձեր ոգին չբուժվեց. դուք միշտ հիշում էիք հայրենի երկիրը։ Եվ այն միջոցին, երբ այրվում էիք գործարանների մրոտ ծխի ու հրավառ վառարանի առաջ, հայրենի տան կարոտն էլ ձեր սիրտն էր այրում։

Շնորհիվ մեծ Ստալինի մեր ու ձեր սրտի խնձը կատարվեց. դուք իրավունք և արտոնություն ստացաք Հայրենիք վերադառնալու։

Մեր սրտերը հույզերով, մեր աչքերը լույսերով, մեր հոգիներն անձկալի կարոտով ու մեր ձեռքերը ծաղկի պսակներով լցված սպասում ենք ձեզ։

Հ. ՍՃԱՌՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ.

(«Սով. Հայաստան» № 260 1945 թ.)